



The image shows the front cover of an old book. The main part of the cover is decorated with a dense, irregular pattern of small yellow and gold spots on a dark, almost black background, a style often called 'stone' or 'shell' marbling. To the left, the spine of the book is visible, made of a light-colored, textured material, possibly cloth or leather, which appears worn and slightly discolored. A small, rectangular, light-colored paper label is affixed to the bottom left corner of the marbled area. The label has the number '7293' printed on it in a dark, serif font. There is also a small, faint, dark rectangular mark on the spine, near the top.

7293



4255

~~1841~~

862x


ԻՆՁ Է ԿԱՐԴՈՒՄ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

ԵՒ ԻՆՉՊԵՍ Է ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ՆԱ ԴԵՊԻ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ ԵՒ ԳԻՐԲԸ

(ԺՐՈԳԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՆՇԵԼՈՒ ՀԵՄԵՐ)

ԸՍՏ ԳՐՈՒԳԱՎԻՆԻ

Ս. Ա.



Թ Ի Յ Լ Ի Ս

ՏՊԱԳՐԱՆ Տ. Մ. ՌՕՏԻՆԻԱՆՑԻ

Типография Т. М. Ротинианца, Гол. пр., д. № 41.

1899



ԻՆՉ Է ԿԱՐԳՈՒՄ ԺՈՂՈՎՈՐԻՏԻՐ

ԵՒ ԻՆՉՊԷՍ Է ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ՆԱ ԳԷՊԻ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ ԵՒ ԳԻՐԲԸ

(Ժրագիր տեղեկութիւններ հաւաքելու համար)

1 ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՏՆՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

§ 1. Ո՞վ է այս ծրագրով տեղեկութիւններ հաւաքողը: Ձեր հասարակական դիրքը: Ինչ լարաբերութեան մէջ էք ժողովրդի հետ և որքան ժամանակ է, որ նրա հետ շփուում էք:

§ 2. Իսկապէս որ տեղին են վերաբերվում ձեր հետազոտութիւնները: Եւ քանի որ նախնայի, դաւառի, զիւղաքաղաքի կամ գիւղի անունը, որի մասին տեղեկութիւններ էք հաղորդում:

§ 3. Բանձնակ տեղ է այդ, թէ խուլ, ետ ընկած. ինչ հեռաւորութեան վրայ է գտնվում երկաթուղու գծից, մօտակալ քաղաքից, առևտրական կամ արդիւնաբերական կենդրոններից:

§ 4. Քանի տուն բնակիչ կալ և քանի հողի ամեն մի սեռից:

Дозволено Цензурою. Тифлисъ, 17-го Июля 1899 г.

§ 5. Բնակիչները միայն հայեր են, թէ ուրիշ ազգութիւններից էլ կան. եթէ կան, հաղորդեցէք դրանց թիւն էլ: Բնակիչները բնիկ են, թէ գաղթած են ուրիշ կողմերից: Հայերը որ դաւանութեան են պատկանում և ինչ լեզու են խօսում:

§ 6. Տեղացիների գլխաւոր զբաղմունքը որոնք են. նրանք գնում են ուրիշ տեղ աշխատանքի. եթէ գնում են— ուր, ինչ աշխատանքի և մօտաւորապէս քանի հոգի:

§ 7. Ո՞րքան հարուստ է ազգաբնակիւթիւնը: (Յանկալի է տեղացիների տնտեսական դրութեան մասին մի որոշ գաղափար ունենալ:)

§ 8. Գիւղում ուսումնարան կա՞յ, եթէ կայ— որպիսի՝ արքունական թէ մասնաւոր: Քանի տարւալ դասընթացք է. քանի աշակերտ (տղալ և աղջիկ) կայ. տարեկան քանի հոգի են աւարտում:

§ 9. Տեղացիները ինչպէս են նախում ուսումնարանի վրայ՝ քաղցր աչքով, անտարբեր, թէ թշնամաբար: Օրինակներ բերէք ցոյց տալու համար, թէ ժողովուրդը ինչպէս է նախում ուսումնարանի վրայ և ինչու է այս կամ այն տեսակ վերաբերմամբ դէպի նա:

§ 10. Արդեօք տեղիդ քահանան, տիրացուն կամ մի որեւէ ուրիշ մարդ երեխայ չեն սովորեցնում. եթէ սովորեցնում են, հաղորդեցէք նրանց գործունէութեան մասին հետեւալ տեղեկութիւնները. քանի հոգի են աշակերտ պահում, ինչ գի-

տութեան տէր մարդիկ են, որքան ժամանակ է որ ուսուցչութիւն են անում, քանի աշակերտ ունին, սրանցից ինչ են ստանում, ինչ դասագրքեր են գործածում և այլն: Այդ տեսակ վարժապետների վրայ ժողովուրդը ինչ աչքով է նախում— հաւատ ընծայում է նրանց:

§ 11. Թէ աղպիսի վարժապետների մօտ սովորողները և թէ ուսումնարանների աշակերտները արդեօք այնքան գիտութիւն դուրս են բերում զպրոցից, որ առանց ուրիշի օգնութեան գրքեր կարդան և իրանց կարգացածը հասկանան:

§ 12. Տեղդ որեւէ ժողովրդական ընթերցանութիւնն էր լինում են. եթէ այո— ո՞վքեր են գործին գլուխ կանգնողները, տարեկան քանի ընթերցանութիւն է տեղի ունենում, մօտաւոր ձրի է թէ վճարով Թւեցէք կարգացած գըրւածքների վերնագրերը և նշանակեցէք ջոկ-ջոկ թէ ձրի և թէ վճարով չաճախող ունկնդիրների թիւը: Յաճախորդները ինչ հասակի, պարագմունքի և ուսման տէր մարդիկ են: Յաճախորդների վերաբերմունքը դէպի ընթերցանութիւնները:

§ 13. Եթէ տեղդ որեւէ թատերական ներկայացումներ են լինում, սուէք նոյն տեղեկութիւնները, ինչ որ 12 §-ում:

§ 14. Բնակիչներից քանի հոգի հայերէն գրել-կարդալ գիտեն (գրագէտ են) և քանի հոգի

միայն կարգալ (կիսադրագէտ): Օտար լեզուներով գրել-կարդացողների թիւը:

§ 15. Երբ մէկնումէկը բարձր ձայնով գիրք կամ լրագիր է կարդում, անդրագէտները հետաքրքրվում և սիրով լսում են, թէ ոչ:

§ 16. Տեղացիները ինչպէս են գիրք կարդում՝ մենակ, թէ մի քանի հոգի միասին հաւաքւած: Գիրք կարդալու համար սովորաբար ձրտեղ են հաւաքվում:

§ 17. Գրական լեզուն և կամ ոչ-տեղական բարբառները հասկանալի են տեղացիներին:

2. Ի՞նչ է ԿԱՐԴՈՒՄ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

§ 18. Ի՞նչ գրքեր կան այն գիւղում (կամ գիւղաքաղաքում,) որին վերաբերվում են ձեր հաւաքած տեղեկութիւնները: Կազմեցէք այդ գրքերի ցուցակը:

Ծանօթ. Յուցակի մէջ պէտք է մտնի զիւղացիների մօտ եղած ամեն մի գիրք, լինի դա վիպական գրածք, դասագիրք, երգարան, ժամագիրք, օրացոյց թէ երազահան:

§ 19. Եթէ այդ գիւղում ձեռագիր գրքեր էլ կան, դրանց ցուցակն էլ կազմեցէք:

§ 20. Ի՞նչով բացատրել, որ այս կամ այն գիրքը աւելի շատ է տարածւած՝ նրանով արդեօք, որ գիւղացիները մի գիրք միւսից աւելի են


հաւանում, թէ որեւէ ուրիշ պատահական պատճառներ կան:

§ 21. Ժողովուրդը ուշադրութիւն չէ դարձնում արդեօք գրքի վերնագրի և արտաքին զեղեցկութեան վրայ. գրքերի ճոճուան վերնագրերը և նրանց մէջ զետեղած պատկերները նշանակութիւն ունին գիւղացու աչքում:

3. ԺՈՂՈՎՐԴԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ:

§ 22. Ձեզ չալտնի գիւղում գիրք կարդալու ցանկութիւն նկատվում է: Եթէ չէ նկատվում, որոշեցէք թէ ի՞նչ է դրա պատճառը—այն որ ժողովուրդը գիրք չունի, թէ այն որ նա կարդալու սովոր չէ:

§ 23. Առհասարակ ժողովուրդը ինչպէս է վերաբերվում դէպի գիրք կարդալը—ընթերցանութիւնը. արդեօք նա այդ լուրջ և օգտակար գործ է համարում, թէ ընդհակառակը, կարծում է թէ գիրք կարդալ կարող են միայն պարսպ, անգործ մարդիկ, այն էլ ժամանակ անցկացնելու համար. գրքից բան սովորել է ուզում նա, թէ միայն զըւարճութիւն է փնտրում. տպագրական խօսքին հաւատ ընծայում է ժողովուրդը թէ ոչ. ինչու համար են նրա կարծիքով գրքեր գրում: Ցոյց տը-



ւէք, թէ ինչպէս են վերաբերվում դէպի գիրքը տղամարդիկ և կանայք, որպէս և զանազան հասակի մարդիկ՝ երեխաները, հասակաւորները և ծերերը: Ի՞նչպէս են նալում ընթերցանութեան վրայ հարուստ, միջակ կարողութեան տէր և չքաւոր գիւղացիները. գրքի վրայ փող ծախսելուն ինչպէս են նալում սրանք:

§ 24. Ո՞րն աւելի գին ունի ժողովրդի աչքում՝ կ'ըօնական բովանդակութեամբ գիրքը, թէ աշխարհական: Արդեօք զանազանութիւն նկատվում է տղամարդկանց և կանանց, որպէս և տարբեր հասակի մարդկանց վերաբերմունքի մէջ դէպի այս և այն բովանդակութեամբ գրքերը: Յուց տւէք թէ թնչի մէջ է նկատվում այդ զանազանութիւնը: *

§ 25. Ի՞նչպէս է վերաբերվում ժողովուրդը Ս. Գրքի (Հին և Նոր Կտակարանի) ընթերցանութեան. գիւղացիները որն են աւելի սիրում կարդալ՝ աշխարհաբար Աստածաշունչն ու Աւետարանը, թէ գրաբառը: Մեզք չէ համարվում կարդալ Հին Կտակարանի գրքերը. չկայ արդեօք այնպիսի համոզումն, թէ ով որ ծախէ թաւր կարդալ հին Կտակարանը—կըցնորի:

*) Շատ ցանկալի է, որ ընթերցողների կարծիքը այս կամ այն գրքի մասին դրի առնւին կարելոյն չափ ճշտութեամբ, հէնց իրանց—գիւղացիների ոճով, խօսքերով:

§ 26. Ի՞նչն է աւելի շատ հետաքրքրում երեխաներին և հասակաւորներին կ'ըօնական բովանդակութեամբ գրքերում՝ սուրբերի կեանքի զիպածնէրը, նրանց գործած հրաշքները, քարոզած վարդապետութիւնը, թէ կեանքի սրբութիւնը:

§ 27. Ո՞ր սուրբերի վարքը աւելի մեծ համակրութիւն է վայելում ժողովրդի կողմից:

§ 28. Չկան արդեօք ժողովրդի մէջ տարածւած անվաւեր (ձեռագիր) գրածքներ կրօնական բովանդակութեամբ. սրանցից որոնք աւելի համակրութեամբ են կարդացվում. բերէք այդ ձեռագրերի ցուցակը:

§ 29. Ի՞նչպէս են վերաբերվում երեխաները և հասակաւորները դէպի հէքիաթնէրը. սրանցից որոնք են աւելի զուր գալիս երեխաներին և որոնք հասակաւորներին:

§ 30. Յալտնի են ժողովրդին Աղալեանցի, Նաւասարդեանցի, Աչըղ-Ջիւանի, Քամալեանցի և ուրիշների հէքիաթները:

§ 31. Ի՞նչպէս են նալում գիւղացիները վիպական գրածքների վրայ:

§ 33. Յալտնի են ժողովրդին Խ. Աբովեանի, Բաֆֆի, Աղալեանցի, Պ. Պաօշեանցի, Ռ. Պատկանեանի, Շիրվանդադէի, Փափազեանի և ուրիշների գրածքները:

§ 33. Յուց տւէք թէ այդ հեղինակների ո՞ր

գրաւածքներն են յայտնի ժողովրդին. բերէք ընթերցողների կարծիքը սրանց մասին:

§ 34. Սիրում են արդեօք գիւղացիները չափածոյ գրւածքներ (ոտանաւոր) կարդալ, թէ արձակ գրւածքները գերադաս են համարում:

§ 35. Յայտնի են ժողովրդին որեւէ դրամատիքական (թատերական) գրւածքներ, օրինակ՝ Գաբր. Սոււդուկեանցի: Ի՞նչպէս են վերաբերում գիւղացիները այդ տեսակ գրւածքներին. թատերական գրւածքների ձևը չէ՞ դժարացնում նրանց:

§ 36. Յայտնի են ժողովրդին որեւէ օտարազգի հեղինակների գրւածքներ. որոնք, սրանց վրայ քննչպէս է նախում ժողովուրդը:

§ 37. Հալ հեղինակներից որոնց գրւածքներն են աւելի կարգացվում—նրանց, որոնք նրկարագրում են գիւղական կեանքը, թէ նրանց, որոնք նիւթ են առնում քաղաքացիների և աւելի բարձր շրջանի կեանքից:

§ 38. Բնութեան գեղեցկութիւնների նկարագրութիւնը հետաքրքրում է ժողովրդին:

§ 39. Բեւեռտրիստիքական գրւածքների մէջ ամենից շատ քննչ է հետաքրքրում ժողովրդին (հասկաւորներին և երեխաներին)—բարդ Փաբուլան, խրատական մասը, թէ որեւէ ուրիշ բան:

§ 40. Հետաքրքրում է արդեօք ժողովուրդը

(երեխաները և հասակաւորները) պատմական գրւածքներով. քննչ է այդ գրւածքների մէջ աւելի հետաքրքրում նրան—արդեօք պատերազմների նկարագրութիւնը, թագաւորների և զօրավարների անձնաւորութիւնը, ժողովրդի նիստ ու կացը, թէ ժողովրդական շարժումները:

§ 41. Մասնաւորապէս ո՞ր պատմական դիպաւծները և ո՞ր պատմական անձնաւորութիւնները աւելի են հետաքրքրում ժողովրդին:

§ 42. Նկատվում է արդեօք ժողովրդի մէջ հետաքրքրութիւն դէպի ուրիշ ազգերի պատմութիւնը, ուրիշ պետութիւնների պատմական անձնաւորութիւնները և առհասարակ դէպի ոչ-հայկական կեանքը:

§ 43. Հետաքրքրվում է արդեօք ժողովուրդը մեծ մարդկանց կիւնսագրութիւններով:

§ 44. Բնագիտական բովանդակութեամբ գրքերին քննչպէս է վերաբերվում ժողովուրդը (երեխաները և հասակաւորները): Այդ գրքերի մէջ քննչ է ամենից շատ հետաքրքրում ժողովրդին—բնութեան երեւոյթների բացատրութիւնը, կենդանիների կեանքը, երկնքի և երկրի նկարագրութիւնը, թէ որեւէ դործական խորհուրդ կամ ցուցմունք:

§ 45. Գիւղատնտեսական, պարտիշպանական, մեղւարութական և այլ նման բովանդակութեամբ գրքերով հետաքրքրվում

են արդեօք գիւղացիները. սրանք ալդ տեսակ դրքերի պահանջ զգում են:

§ 46. Իժշկական գրքերին խնչպէս են վերաբերվում գիւղացիները: Օգտվում են, թէ ոչ:

§ 47. Հետաքրքրվում է ժողովուրդը ճանապարհորդութիւններին նկարագրութիւններով, աշխարհագրական և ազգագրական գրաւածքներով, Հայաստանի տեղագրութեամբ, զանազան արհեստների և սովորութիւնների նկարագրութեամբ և այլն:

§ 48. Ի՞նչպէս է նախում ժողովուրդը իրաւաբանական և հասարակական գիտութիւններին վերաբերեալ գրքերի վրայ:

§ 49. Հետաքրքրվում է արդեօք ժողովուրդը երգարաններով: Պատահում է որ գիւղացիները երգեր փոխ առնեն ալդ գրքերից. եթէ ալդպիսի դէպքեր եղել են, ցոյց տւէք թէ որ երգերն են փոխ առնել անմիջապէս գրքերից:

§ 50. Հետաքրքրվում է արդեօք ժողովուրդը օրացույցներով. ի՞նչով է առաջնորդվում գիւղացին այս և ոչ այն օրացույցը ձեռք բերելիս:

§ 51. Հետաքրքրվում է արդեօք ժողովուրդը երազահաններով, էֆէմերիդներով. ի՞նչպէս է վերաբերվում նա ալդ տեսակ հրատարակութիւններին՝ հաւատում է նրանց գուշակութիւններին, թէ միայն զարճութեան համար է կտրուում:

4. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

§ 52. Տեղդ որ պարբերական հրատարակութիւններն են ստացվում և քանի օրինակ ամեն մէկից. Քանի օրինակ միմիայն գիւղացիներն են ստանում:

§ 53. Գիւղացիները գլխաւորապէս ի՞նչով են առաջնորդվում այս կամ այն թերթին բաժանորդ գրելիս:

§ 54. Լրագրների որ տեսակ տեղեկութիւններն են աւելի մեծ հետաքրքրութեամբ կարդացվում:

5. ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

§ 55. Տեղացիք զարդարում են արդեօք իրանց սենեակները պատկերներով: Ամեն մի գիւղացու տան պատկեր կայ, թէ ոչ:

§ 56. Ի՞նչ պատկերներ աւելի շատ են պատահում գիւղերում: Եթէ կարելի է, գիւղերում եղած բոլոր պատկերների ցուցակը կազմեցէք:

§ 57. Ժողովուրդը որն է աւելի սիրում՝ ներկերով նկարած, գունաւոր պատկերները, թէ աններկ:

6. ՈՐՏԵՂԻՑ ԵՒ ԻՆՉՊԷՍ ԵՆ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԸ ԳԻՐԳ ՃԱՐՈՒՄ:

§ 58. Ձեր գիւղում՝ ուսումնարանի, որեւէ գործարանի կից կամ մասնաւոր մարդու մօտ գրադարան-ընթերցարան չկայ: Եթէ կայ՝ հաղորդե-

ցէք գրադարանում եղած գրքերի ցուցակը, որպէս
և գրքերից օգտուելու պայմանները. գրադա-
րանի գիւղացի բաժանորդների և ընթերցողների
թիւը. որ գրքերն են ամենից շատ կարդացվում,
որոնք—պակաս և որոնք բոլորովին չեն կարդաց-
վում:


§ 59. Ո՞րտեղ են գիւղացիները գիրք առնում.
քաղաքում, թէ հէնց գիւղում, շրջիկ գրավաճառ-
ներից:

§ 60. Կարելոյն չափ մանրամասն տեղեկու-
թիւններ հաղորդեցէք շրջիկ գրավաճառների (եթէ
միայն ալիպիսիները կան) առևտրի մասին ձեր
կողմերում:

§ 61. Ձէք կարող արդեօք որոշել, թէ տա-
րեկան ի՞նչ գումար է ծախսում գիւղացու ընտա-
նիքը գրքի վրայ:

§ 62. Արդեօք որեէ գրքեր չէն ծախվում ու-
սումնարանում կամ ուսուցչի, քահանայի, երէց-
փոխի մօտ: Ի՞նչ գրքեր կան դրանց մօտ. որ գրք-
քերիցն են աւելի շատ առնում գիւղացիները:

§ 63. Ձեր գիւղում ձրի գրքեր չէն բաժան-
վում. ո՞վ և ի՞նչ գրքեր է բաժանում: Ձրի գիրք ու-
պատկեր բաժանելու հետեանքի մասին տեղեկու-
թիւններ հաղորդեցէք:



Մ Յայտագիտական գրադարան



MAL007762

